ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 16.03.2018թ.

ժամը 12 ^{00} -ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության շահագործման և պլանավորման բաժնի սպա մայոր Ս. Ստեփանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,

ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Բաղրամյան)

1. Ի կատարումն բողոքարկման խորհրդի՝ 12.03.2018թ.-ի կայացված (կայքում հրապարակվել է 15.03.2018թ-ին) թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/29 իրավապարտադիր որոշման.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. **Ի կատարումն բողոքարկման խորհրդի՝ 12.03.2018թ.-ի կայացված (կայքում հրապարակվել է 15.03.2018թ-ին) թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/29 իրավապարտադիր որոշման.**

(Ա.Բաղրամյան)

1.1 Քննարկելով **«Կարկոմավտո սերվիս»** ՍՊԸ-ի կողմից **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1»** ծածկագրով ԲՄ ընթացակարգի կապակցությամբ ներկայացված բողոքի վերաբերյալ Բողոքարկման խորհրդի կողմից կայացրած որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել 07.02.2018թ. ժամը 11:00-ի կայացած, 16.02.2018թ. շարունակված և 20.02.2018թ. հաստատված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ**-ի հայտով ներկայացված փաստաթղթերը հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) անհամապատասխան ճանաչելու մասին, **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ**-ի հայտը մերժելու մասին որոշումները և սույն որոշումներից հետո կայացված մնացած որոշումները, և **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ**-ի կողմից թիվ 9 հավելվածով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և պահանջագիրը գնահատել ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1»** ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց **1, 2, 3, 9, 10, 11, 12, 13, 15, 28, 31 և 32-րդ** չափաբաժիններում **«Մ-Բի-Ռ» ՍՊԸ**-ն, **4, 5, 6, 7 և 8 -րդ** չափաբաժիններում **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ**-ն, **14, 16, 17, 18, 19, 20, 21, 23, 27, 29, 30 և 33-րդ** չափաբաժիններում **«Գարանտսերվիս» ՍՊԸ-ն,** իսկ **22, 24, 25 և 26-րդ** չափաբաժիններում **«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ**-ն:

4.2 Քանի որ **«Մ-Բի-Ռ», «Գարանտսերվիս» և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ների կողմից արդեն ներկայացվել էր** որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովը որոշեց **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ**-ն առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ**-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(Ա.Բաղրամյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄՃԲ-4/1»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Գնահատող, (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող,	Ս. Ստեփանյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան